

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լատվիայի  
Հանրապետության Կառավարության միջև քաղաքացիների  
փոխադարձ այցելությունների մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Լատվիայի  
Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով երկու պետությունների միջև բարեկամական  
հարաբերությունների զարգացման ցանկությամբ,

գիտակցելով, որ մարդասիրական բնագավառում անձանց միջև  
շփումների զարգացումը և երկու պետությունների ժողովուրդների  
համագործակցությունը տնտեսության, գիտության, տեխնիկայի և  
մշակույթի բնագավառներում կնպաստեն այդ նպատակի իրագործմանը,

ձգտելով երկու պետությունների քաղաքացիների փոխադարձ  
այցելությունների կարգի հեշտացմանը,

համաձայնեցին հետևյալի մասին.

### Հոդված 1

Մի Կողմի պետության քաղաքացիները մուտք են գործում, դուրս են  
գալիս, տարանցմամբ անցնում են և ժամանակավորապես գտնվում են  
մյուս Կողմի պետության տարածքում սույն Համաձայնագրի անբաժանելի  
մաս հանդիսացող՝ սույն Համաձայնագրին կից Հավելվածի 1-ին և 3-րդ  
կետերում նշված այն փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք  
ճանաչվում են երկու Կողմերի կողմից վավերական սույն Համաձայնագրի  
դրույթներով նախատեսված պայմաններով արտասահման  
այցելությունների համար:

### Հոդված 2

Մի Կողմի պետության քաղաքացիները մուտք են գործում մյուս  
Կողմի պետության տարածք և դուրս են գալիս այնտեղից միջազգային  
հաղորդակցության համար բաց անցումային սահմանային կետերով:

### Հոդված 3

Մի Կողմի պետության քաղաքացիները մյուս Կողմի պետության  
տարածքում գտնվելու ժամանակ պարտավոր են պահպանել այդ  
պետության օրենքներն ու կանոնները, այդ թվում՝ օտարերկրյա  
քաղաքացիների համար սահմանված՝ գրանցման, կեցության և  
տարանցման կանոնները:

#### Հոդված 4

1. Մի Կողմի պետության քաղաքացիները մյուս Կողմի պետության տարածքում՝ սույն Համաձայնագրի կից Հավելվածում նշված և երկու Կողմերի կողմից արտասահման այցելությունների համար վավերական ճանաչված փաստաթղթերը կորցնելու դեպքում պարտավոր են հայտնել այդ մասին գտնվելու Կողմի պետության իրավասու մարմիններին:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքում գտնվելու Կողմի պետության իրավասու մարմինները անվճար տրամադրում են փաստաթուղթ, որը հաստատում է արտասահման այցելությունների համար վավերական փաստաթղթի կորստի մասին անձի հայտնելու փաստը:

#### Հոդված 5

1. Կողմերի պետությունների այն քաղաքացիները, որոնք ունեն դիվանագիտական կամ ծառայողական անձնագրեր, մուտք են գործում, դուրս են գալիս, տարանցիկ անցնում են և մյուս Կողմի պետության տարածքում գտնվում են առանց մուտքի արտոնագրի:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ Կողմերի պետությունների քաղաքացիները կարող են մյուս Կողմի պետության տարածքում գտնվել առանց մուտքի արտոնագրի 90 օրից ոչ ավել՝ կես տարվա ընթացքում:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված ժամկետը կարող է երկարաձգվել Կողմերից յուրաքանչյուրի օրենքներին և կանոններին համապատասխան:

#### Հոդված 6

1. Մյուս կողմի պետության տարածքում գտնվող՝ Կողմերի պետությունների այն քաղաքացիները, որոնք ունեն դիվանագիտական կամ ծառայողական անձնագրեր և հանդիսանում են դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի կամ առևտրային ներկայացուցչության աշխատակիցներ, կարող են առանց մուտքի արտոնագրի մուտք գործել, դուրս գալ և գտնվել մյուս Կողմի պետության տարածքում հավատարմագրման ամբողջ ժամակաշրջանում՝ հավատարմագրումը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին կետը վերաբերում է նաև նշված անձանց ընտանիքների անդամներին (կին/ամուսին, երեխաներ, ծնողներ, ինչպես նաև նրանց խնամքի տակ գտնվող այլ անձինք), որոնք ապրում են նրանց հետ իրենց պաշտոնավարման ընթացքում և ունեն սույն հոդվածի 1-ին կետում նշված անձնագրերը:

#### Հոդված 7

Կողմերը մյուս Կողմի պետության քաղաքացիներին մուտքի արտոնագրերը և կեցության իրավունքը տրամադրում ու դրանց

վավերականության ժամկետները երկարաձգում են իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան:

## Հոդված 8

Կողմերի իրավասու մարմինները անվճար մուտքի արտոնագրեր կտրամադրեն.

1. մյուս Կողմի արտաքին գործերի նախարարության կամ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի պաշտոնական դիմումի առկայության դեպքում՝ հետևյալ կատեգորիաների անձանց.

ա) երկու Կողմերի նախարարությունների և գերատեսչությունների միջև պայմանավորվածությունների համաձայն՝ երկկողմ և բազմակողմ բանակցությունների, խորհրդատվությունների կամ խորհրդակցությունների մասնակցելու համար ժամանող պաշտոնական պատվիրակությունների անդամներին,

բ) նախարարությունների, գերատեսչությունների, պետական դեպարտամենտների, դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների հրավերներ ունեցող անձանց:

2. Հետևյալ կատեգորիաների անձանց.

ա) Հայաստանի Հանրապետության և Լատվիայի Հանրապետության միջև համագործակցության միջպետական ծրագրերին համապատասխան ժամանող անձանց՝ ընդունող պետական կազմակերպության հրավերը ներկայացնելու դեպքում,

բ) մինչև տասնութ (18) տարեկան քաղաքացիներին՝ հրավեր կամ սույն Համաձայնագրով նախատեսված համապատասխան պետության տարածք մուտք գործելու իրավունք տրամադրող այլ փաստաթուղթ ներկայացնելու դեպքում,

գ) Կողմերի ուսումնական հաստատություններում ուսանող և ուսման համար ուղևորվող անձանց՝ պատշաճ կերպով ձևակերպված հրավեր և Կողմերի համապատասխան հավատարմագրված ուսումնական հաստատությունում ուսուցման փաստը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում,

դ) ամուսինների, ծնողների, երեխաների, հարազատ եղբայրների/քույրերի, պապի/տատի, թոռների գերեզմանները այցելող անձանց՝ հարազատության աստիճանը/ամուսնության փաստը հաստատող և Կողմերի լիազորված մարմինների կողմից տրամադրված՝ մյուս Կողմի պետության տարածքում գերեզմանի առկայությունը և պահպանությունը կամ թաղման փաստը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում (յուրաքանչյուր այցելությունը մինչև յոթ (7) օր, բայց ոչ ավելի, քան տարեկան երկու անգամ):

3. Իշխանության տեղական մարմինների միջև գործընկերական կապերի ծրագրերին համապատասխան պատվիրակության կազմում երթևեկող անձանց՝ պատվիրակության անձնական ցուցակ պարունակող՝ ընդունող իշխանության մարմնի պատշաճ ձևով ձևակերպված հրավեր ներկայացնելու դեպքում:

## Հոդված 9

Կողմերի իրավասու մարմինները պատշաճ ձևով ձևակերպված հրավեր ներկայացնելու դեպքում կարող են անվճար տրամադրել մուտքի արտոնագրեր ոչ առևտրային միջոցառումների մասնակիցներին՝ սպորտային մրցույթների, փառատոների և համերգների, երաժշտական, ֆոլկլորային և պարային խմբերի, ինչպես նաև սպորտային մրցավարների և մրցույթների ժյուրիի անդամներին:

## Հոդված 10

1. Կողմերի իրավասու մարմինները, որպես կանոն, պետք է պատասխան ներկայացնեն մուտքի արտոնագիր տրամադրելու հարցմանը աշխատանքային տասը /10/ օրվա ընթացքում՝ սկսած հարցումը ստանալու պահից:

2. Հարցման քննարկման ժամանակ տեղեկությունների ոչ բավարար լինելու պատճառով դժվարություններ առաջանալու դեպքերում հարցման քննարկման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև երեսուն /30/ օր:

## Հոդված 11

Կողմերի իրավասու մարմինները կտրամադրեն պաշտոնապես գտնվելու ամբողջ ժամանակամիջոցի համար վավերական բազմակի արտոնագրեր՝ անձանց հետևյալ կատեգորիաներին՝

ա) ազգային/պետական ավիաընկերությունների մշտական ներկայացուցչությունների ղեկավարներին և աշխատակիցներին,

բ) Հայաստանի Հանրապետության և Լատվիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարություններին կից մշտապես հավատարմագրված համապատասխան թղթակիցներին և լրագրողներին,

գ) սույն հոդվածի «ա» և «բ» կետերում թվարկված անձանց ամուսիններին,

դ) սույն հոդվածի «ա», «բ» և «գ» կետերում թվարկված անձանց խնամքի տակ գտնվող անչափահաս երեխաներին:

## Հոդված 12

Կողմերի իրավասու մարմինները, փոխադարձության հիման վրա, անվճար կտրամադրեն մուտքի բազմակի արտոնագրեր՝ անձանց հետևյալ կատեգորիաներին՝

ա) երկու Կողմերի պետությունների օդանավակայանների միջև հատուկ չվերթերի անձնակազմի անդամներին,

բ) Կողմերի պետությունների տարածքով անցնող երթուղիներով երթևեկող գնացքային, սառնարանային և էլեկտրաքարշային բրիգադների

և փոստահեռագրային ծառայության միջազգային գնացքների անդամներին,

գ) Կողմերի համապատասխան նախարարությունների կամ գերատեսչությունների երկկողմ համաձայնագրերի հիման վրա երկաթուղային և ավտոմոբիլային բեռների փոխադրման և ուղեկցելու կանոնավոր երթևեկություններ իրականացնող անձանց:

### Հոդված 13

Կողմերի իրավասու մարմինները հումանիտար բնույթի անհետաձգելի դեպքերում անվճար մուտքի արտոնագրեր կտրամադրեն քսանչորս (24) ժամվա ընթացքում: Այս դեպքերը ներառում են՝

ա) ուղևորություն ընտանիքի ծանր հիվանդ անդամին կամ մերձավոր բարեկամին այցելելու նպատակով՝ հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում,

բ) շտապ բժշկական օգնության կարիք ունեցող անձանց կամ ծանր հիվանդություններով տառապող անձանց ուղևորությունները, ինչպես դա հաստատվում է համապատասխան փաստաթղթերով, մյուս Կողմի պետության տարածք շտապ մուտքի անհրաժեշտությունը հաստատող և լիազորված մարմինների կողմից տրամադրված փաստաթղթերի առկայության դեպքում, եթե դա չի հակասում Կողմերի ազգային օրենսդրությանը,

գ) սույն հոդվածի «բ» կետում նշված անձանց ուղեկցելու հետ կապված ուղևորությունները՝ հիվանդին ուղեկցելու անհրաժեշտությունը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում,

դ) ընտանիքի անդամի կամ մերձավոր բարեկամի հուղարկավորությանը մասնակցելու համար՝ մահվան փաստը հաստատող փաստաթղթի ներկայացման դեպքում,

ե) տարերային աղետների, համաճարակների և տեխնածին աղետների հետևանքների վերացման ժամանակ օգնություն ցուցաբերելու նպատակով այցելությունները:

### Հոդված 14

1. Կողմերի իրավասու մարմինները, երբ դա անհրաժեշտ է, մյուս Կողմի քաղաքացիներին կտրամադրեն մուտքի տարանցիկ արտոնագրեր ուղևորվելու պետության տարածք գործելու իրավունք տրամադրող մուտքի արտոնագրի առկայության դեպքում:

2. Անձանց հետևյալ կատեգորիաներին մուտքի տարանցիկ արտոնագրեր կտրամադրվեն այն պայմանով, որ նրանց մոտ առկա լինեն նաև ուղևորատոմսեր՝ դրանց մեջ հաստատված տեղափոխման կետից դուրս գալու ժամկետով՝

ա) տարանցիկ չվերթերի ավիաուղևորներին,

բ) երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտով երթևեկող ուղևորներին:

#### Հոդված 15

Կողմերի իրավասու մարմինները կքննարկեն մուտքի արտոնագրերի երկարաձգման վերաբերյալ հարցումները յոթ (7) օրվա ընթացքում:

#### Հոդված 16

Մի Կողմի պետության այն քաղաքացիները, որոնք ունեն մյուս Կողմի կեցության իրավունք, դուրս են գալիս և վերադառնում են համապատասխան Կողմի պետության տարածք առանց մուտքի արտոնագրի՝ կեցության իրավունքի հիման վրա:

#### Հոդված 17

Սույն Համաձայնագիրը չի սահմանափակում Կողմերից յուրաքանչյուրի իրավունքը՝ իր ազգային օրենսդրությանը համապատասխան մերժելու մյուս Կողմի պետության քաղաքացուն մուտք գործելու կամ կրճատելու նրա այնտեղ մնալու ժամկետը:

#### Հոդված 18

Լատվիայի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող այն անձինք, որոնք օգտվում են սույն Համաձայնագրին կից Հավելվածի 2-րդ կետում նշված փաստաթղթերից (Լատվիայի քաղաքացիներ չհանդիսացող), մուտք են գործում, դուրս են գալիս, տարանցիկ անցնում և գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում սույն Համաձայնագրով Լատվիայի քաղաքացիների համար նախատեսված կարգով:

#### Հոդված 19

Կողմերը, մինչև սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, դիվանագիտական ուղիներով փոխանակում են սույն Համաձայնագրի Հավելվածում նշված՝ արտասահման ուղևորվելու համար վավերական փաստաթղթերի նմուշները: Արտասահման ուղևորվելու համար վավերական նոր փաստաթղթեր շրջանառության մեջ դնելու կամ արդեն գոյություն ունեցող փաստաթղթերի մեջ փոփոխություններ մտցնելու դեպքում Կողմերը ոչ ուշ, քան երեսուն (30) օրվա ընթացքում կտեղեկացնեն միմյանց և կփոխանակեն նոր կամ փոփոխված փաստաթղթերով:

## Հոդված 20

Կողմերը կփոխանակեն մուտքի և գտնվելու կարգի փոփոխության հետ կապված տեղեկություններ: Կողմերը, ըստ անհրաժեշտության, կանցկացնեն խորհրդակցություններ սույն Համաձայնագրի կատարման ընթացքի վերլուծության և դրա հետ կապված այլ հարցերի քննարկման համար:

## Հոդված 21

Կողմերից յուրաքանչյուրը պետական անվտանգության կամ հասարակական կարգի ապահովման կամ բնակչության առողջության պաշտպանության նպատակով կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի առանձին դրույթների գործողությունը: Նման միջոցների ընդունման և չեղյալ համարելու մասին պետք է դիվանագիտական ուղիներով անհապաղ տեղեկացվի մյուս Կողմը:

## Հոդված 22

1. Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման ժամանակ առաջացած վեճերը Կողմերը կլուծեն բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

2. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրությամբ, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնի սույն Համաձայնագրի 23-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգով:

## Հոդված 23

1. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում երեսուն օր անց այն պահից, երբ Կողմերը հայտագրերի փոխանակման միջոցով միմյանց ծանուցում են դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

2. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին հայտագրերի փոխանակումը կիրականացվի 2002 թվականի հունիսի 26-ին ստորագրված՝ Հանձնման և ընդունման մասին Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի կողմից ներպետական ընթացակարգերը կատարվելու մասին հայտագրերի փոխանակման հետ միաժամանակ:

3. Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը դիվանագիտական ուղիներով այդ մասին մյուս Կողմին գրավոր ծանուցելու միջոցով: Այս դեպքում սույն

Համաձայնագրի գործողությունը դադարում է նման ծանուցումը մյուս  
Կողմի ստանալուց հետո իննսուն (90) օր անց:

Կատարված է Ռիգա քաղաքում 2002 թվականի հունիսի 26-ին,  
երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, լատիշերեն և ռուսերեն, ընդ  
որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ  
տարաձայնությունների դեպքում ռուսերեն տեքստը գերակայում է:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2003թվականի մայիսի 17-ից:





## ՀԱՎԵԼՎԱԾ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և  
Լատվիայի Հանրապետության կառավարության միջև  
փոխադարձ այցելությունների մասին»  
Համաձայնագրին կից

Մույն Համաձայնագրով սահմանից դուրս վավերական են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը.

1. Լատվիայի Հանրապետության քաղաքացիների համար՝  
ա/ դիվանագիտական անձնագիր,  
բ/ ծառայողական անձնագիր,  
գ/ քաղաքացու անձնագիր,  
դ/ նավաստու գրքույկ,  
ե/ վերադարձի վկայական (միայն Լատվիայի Հանրապետություն վերադառնալու համար):
2. Լատվիայի քաղաքացիություն չունեցող անձանց համար՝  
ա/ քաղաքացիություն չունեցողի անձնագիր,  
բ/ նավաստու գրքույկ,  
գ/ վերադարձի վկայական (միայն Լատվիայի Հանրապետություն վերադառնալու համար):
3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝  
ա/ դիվանագիտական անձնագիր,  
բ/ ծառայողական անձնագիր,  
գ/ քաղաքացու անձնագիր,  
դ/ Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական (միայն Հայաստանի Հանրապետություն վերադառնալու համար):





